

Տեսանք թէ Յովհաննէս Թիւթիւնճի ոչ մէկ տեղ երկար մնացած է, այլ միշտ շրջուն կեանք մը ունեցած է:

Ինչպէս իր կենսագրութեան մէջ տեսնուեցաւ, անկա տեղէ տեղ թափառած է: Կարելի է ենթադրել, թէ իբր հետեւանք իր շրջուն կեանքին, իրեն համար ունակութիւն մը եղած ըլլայ նոր տեղեր տեսնելու փափաքը:

Բալորովին անհաւանական չէ, որ երբ Եգիպտոս եկած է, Հապէշիստանի՝ այս առասպելական ու խորհրդաւոր երկիրին մասին տարօրինակ բաներ լըսած ըլլայ և իր հետաքրքրութիւնը շարժած ու այս առթիւ փորձուած՝ անգամ մը այցելելու յոգեբրկիրը, ուր իրմէ հազիւ երկու տասնեակ մը տարի առաջ (1652) հայ եկեղեցական մը՝ Երուսաղէմի նուիրակ Գրիգոր եպս. այցելած և այնքան պատուով ընդունւած էր և ուր, 60-70 տարի առաջ, ուրիշ հայ եպիսկոպոս մը, վերոյիշեալ Մատթէոսը (+1620), այնքան բարձր պատիւներու հասած, կայսեր խորհրդականը դարձած և այնքան փափուկ պաշտօնով մը Փորթուգալ և Հռոմ դեսպան ղրկուած էր:

Յովհաննէս արքեպս. Թիւթիւնճի, որ արկածախնդիր դէմք մըն էր, որքան կարելի է դատել իր կեանքէն, կրնար այս տեսակ փորձութիւն մը ունեցած ըլլալ: Պէտք է գիտնալ թէ Հապէշիստան երթալը այդ ժամանակներուն, կ'երեւայ թէ դժոխք երթալու համազօր բան մըն էր: Ասոր ապացոյց կարելի է ներկայացնել 1666 Օգոստոս 21 թուականով Էնկիւրիէն Թօխաթցի Յովհաննէս վրդ.ի եղիազար Այնթապցի կաթողիկոսին ուղղած մէկ նամակը, ուր կ'ըսէ. «մեզ գիւ մը կու գրես քանի մը օր ի Թօխաս կենալու կամ ի Կիպրոս, հրամանք քո է, իսկ քե բնա-